

րասի և Կարոսի օրինակին հետեւլով, ուղղակի թշնամու մայրաբաղարի վրայ արշաւել: Նա գուրս եկաւ Ընախորդից ծին մարտի, արշաւեց նախ դէպի Միջազնութ և արագութեամբ անցաւ Խփրատի ընթացքով դէպի վայր: Նա աւերեց պարսկական երկրը կրակով և սրով, մի քանի քաղաք առաւ կարծ պաշարումներից յետոյ, դրանց թուում Մաշող Մալքա, Տիգրանին մօտիկ արքունի քաղաքներից մէշկը: Արևեկիա ևս եկաւ նա, պյտիկ ահա տեսաւ, որ կարող չէ առնել ամուր Տիգրանին միւս Տիգրիսի ամին: ուստի յետո նահանջեց գետի ձախ ափով: Արդ սկսան Շապուհի գնդերն իրենց յարձակումներն և նեղը ձգեցին Յուլիսանոսին: Վյուու ամենայնիւ նա անշուշա իւր բանակն առանց մէծամեծ կոռասի հոռմէտէական սահմանը կը հասցնէր: բայց ահա (25-ին յաւնիսի 363) մի ճակատամարտի մէջ մահացու մէրք ստացաւ, նրա մահուանից յետոյ զօրից կայսր լնտրուած Յորիանոսը (Jovian) այդ գժուար լիճակին յարմար անձն չէր, նա պատերազմն ու բանագնացութիւններն այնպէս վարեց, որ վերջապէս մի խայտառակ խաղաղութեան դաշն կոռուց: Շապուհն իւր վասնդաւոր թշնամու մահուանից յետոյ ցոյց տուաւ այնքան ճարպիկութիւնն որքան և չափաւորութեան: Նա ձեռք բերաւ Գալերիսի Տիգրիսի ձախ ափին վաստակած երկիրն և Միջազների մի մասը, Մծրնով և Անդքարայով: Մէծ գժուարութեամբ միայն յաջողերաւ հոռմայեցոց պայմանի մէջ մոցնելու, որ այս քաղաքների բնակիչներին իրաւունք տրուի ազտօրէն հեռանալու: Ամենից վասն էր Մծրնից Հրաժարուելն: Վյու բերդը յաջորդ պատերազմների ժամանակ միշտ պարսից յենակէտն է եղել թէ յարձակման ժամանակ ու թէ պաշտպանուելուս բոյց ունեցել և իշխանութեան բարեկարգութեան էր այս դոյջանը: որի վըրա-նիւազն հոռման հայրէ Արշակ նույն միաբանին, որ էւնաց հոռմ էր անցւու ունեց այլու և դոյջաններն ու նորուններն անցնելու: Ասկայն Հայաստանին տիրելը արքայից արքային անքան էլ գիւրին չեղաւ, թէպէտեւ նա Արշակին իւր ձեռքն անցկացրեց, բայց այդու ըստիրեց արքամաթիւ բնական մասերի բաժանուած աշխարհին իւր բազմաթիւ, զրիթէ անկան նախարարներով, և աւելի ևս քիչ տէր եղաւ այդ երկրին երկար ժամանակով: Հայաստանում քրիստոնեաները աւելի հոռմայեցոց կողմն էին պահում: իսկ գեռ բաւական թուով մնացած զորասարեանները (կրակապաշտները) պարսիկների կողմը, դրա վրայ աւելանում էր նաև երկրի մեծ նախարարների փոփոխական անձնական շահէրը, որոնք աւելի սիրով ոչ մի տէր իւրենց զլիին չեին կամենում ճանաչել:

Հոռմայեցիք օգնեցին նախ գալունի և ապա բացարձակ իրենց ապաստանած Պապին: Արշակի որդուն, սակայն միայն նրան իրեւ գործիք բանեցնելու համար, որպէս զի Հայաստանը ուղղակի մի հըռովմէական գաւառ գառնայ, Վաստանուում ևս (Արերիա, որ Հայաստանից գէպի հիւսիս է գտնուում) երկու տէրութեանց կողմնակիցների մէջ կուի ընկաւ: Հինգ տարուց յետոյ կրկին պատերազմական վիճակ էր: 371 ին պարսից արքայն Հայաստանում բացարձակ կուի պիտի մնէր հոռմէական զնիքերի զէմ: Արկու կողմերն էլ կամենում էին այդ երկիրն ուժով և խորամանկութեամբ նուածել: Բայց քանից էլ բանագնացութիւններն անյաջողութեամբ էին վերջանում: այնու ամենայնիւ սրտարին հանգամանքները (հոռմայեցոց համար Գոթերի արշաւաքրը) և բանաւոր կշռադատումները թոյլ չէին տալիս որ ընդհանուր պատերազմ բացուի:

(Եարունակելի)

թարգմ: Ա. Քարամեան.



Մովսէս Կաղանիասուացույ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մասունադանում՝ գտնուած ձեռազիր օրինակները:

(Առաջին Խումբ) :

Հ 632

Ա.Մ.Ճ. = 1761

(Կարունակութիւն) :

Առողջ՝ ֆիք պատմութեան Սղուանց աշխարհն սիհթ՝ թղթեայ, կազմ՝ կաշեպատ տախտակեայ: ՀԱԴՐ-ՄԱՆ.Ք.-ԿԱԶՄ կարերը բանդուած, լուսանցքազրերը կորտած, ինչպէս նն թուղթ՝ 59, 45, 69 175, 209, 257, 247, 295, 505: Խորանզարդեց՝ 95 և 269 թղթերը միանգամյն պկած եւ տեղը շղագիր զրած եւ կացրած: ԴԱՑՄԱԿ: Թ. 1-ա. կէսը, 5-թ. կէսը, 85-ա. կէսը և 85-թ. երեսը: 91-թ. երեսի կէսը 265-թ. 265-ա. կէսը 267-թ. երեսը 551-թ. երեսի կէսը: ՄԽԵ.Ռ.ՈՒԹԻԹԻՒՆ՝ 27×19 մմ: ԹՈՂՂ.Ջ.Ք. 466: ԳՀ.ՐՈՒԹՈՒՆ՝ միասին 12×19. ԳԻՐ՝ Նօտր: ՏՈՂ.Ք.՝ 27. ՎՀԻ.ՆԱԳԻՐ.Ք. կարմրագիր: Ակզմնատառ՝ թղնազիր, տեղ տնես սև կննդանագիր եւ ծաղկազիր: ԽՈՐԱՆՆ.Ջ.Ա.՝ 4 հատ, երես 5. ԼՈՒՍԱՆՑՔ.Ա.Ջ.Ր.՝ 76, թղնազարդ եւ ծաղկազիր (բացի կորտածից): ՍՏԱՑՈՂ. Յակոր Կաթուուկն Եամսինցից: Աշխարհին, ի յերիս հատորս բաժան բաժանուած ու նորութեան թղթը: ՆՈՐՈՒԵ.Ժ. ԹԾՐԹ.Ք.՝ 85 և 269: ԺԱՄՄԱՆԱԿ ՈՒՄ.Ժ.՝ 1761: ՏԾՂ. Ս. Էջմածին: ԺԱՂՈՂ.՝ Երեմիայ: Սրկւգ.:

Տեղեկութիւնը և յիշատակագրութիւնք:

ԵԲԵՍ 1^{ու}

« Օգնեա տէրարիս տէր, և զսկսեալս ի յաւարտ հասն և կատարեաւ: Գիքը պատմութեան Աղուանից Աշխարհին, ի յերիս հատորս բաժանեալ:

շարագրեցեալ ի Մօսիսէ գերիմաստ վարդապետէ Կաղանկատացւոյ, ի վաղմօց ժամանակաց, ի փառը Ամենամեծին Աստուծոյ:

թ. 20.

Երկու կարմիր կնիք «Գիրքս սր. Եջմիածնի է»
ե. 5^ր.

Սոյն երեսի գեղեցիկ ուկենկար խորանադարձը շրջապատող զիրն է՝ «Ես Յակոբոս ոյրս մեղս սախոց, եւ Հայրապետս մեծաց Հայոց ևտու զրել զայս յինձ յիշատակ. նաև գեղ հօգւոս ցաւոց, թվն. ԱՄՓ-1761. Երեմեայ Շողեց. Մի կնիք էլ խորանադարձի եռանկիւնու մէջ նոյն բովանդակութեամբ»:

ե. 85^ր.

«Ե. մէն. 1209. Կատարեցան գիրք առաջին պատմութեանս Աղուանից»:

ե. 211^ր.

«Ծիշեցէք ի քս. գուռնկիանոս Դադիբա, ու բարի ընթերցողք»:

ե. 243^ր.

«Գրեցաւ յաւուրսն Տեառն Յակոբոյ սրբասուն կաթուղիկոսին ամենայն Հայոց և սրբոց Եջմիածնի, Հրամանաւ նորին և ձեռամբ Պուռնկիանոսի անկատար Դպրի, յըսկզբան նոր տարւոյս ի ԱՄՓ. թուին և ի մուտն յունվարի մետասան ժամու աւուրն 1210 Երկուշարթի»:

Երես 256.

Ներբենի կողմում «Ո բարի ընթերցողք յիշենջիք ի Քրիստոս զգիչս Պուռնկիանոս, Հանդերձ կրնակի ծնողիւքու և դուք ևս զողորմութիւն գտշիք ի նոյն բարերար Տեառնէն Հանդերձ ծնողիւք ձերովք ամէն»:

ե. 259.

«Ո՛չ անբարի և տիրապի աւուրս գառնութեան, և ցաւարեր պահուս յորում կամք տիրասութեամբ ի մեծի պահոյս Աստուծածայայտնութեան ի ԱՄՓ. թուոջս և ի յունվարի Գ-ին ի Զ ժամու աւուրս, Զի գերերջանիք Հայրս մեր և սրբակնեցազ Հայրապետն ամենայն Հայոց և ծայրագոյն քահանայապետըս սուրբ Յակոբոս կաթուղիկոս վասն մերցս մեղաց և առ ի պատժելոյ զմեզ Աստուծոյ. յանկարծակի ի խստագոյն և ի սաստիկ ցաւոյ ըմբռնեցաւ որ էր նուղլա. որով կարի վշտացաւ և ի մահճանկաւ և յոյժ նեղացաւ, մինչ զի զհամայն ծառացքս §§§-իս մերց միջարեկ եղեալ ի խորս տրտըմութեան ժամանեցաք, ապայ զԱստուծ կարդացեալ զօդնութիւն և զբժշկութիւն ի նմանէ խնդրե-

ցաք, և վերստին զմեզ ուրախ արար և փարաստեաց զցաւն ի նմանէ. Ասկս որոյ յոգնաթամախիծ պաշտանօք Հայցիմ Հանդիպաղացդ սմին խնդրիցէք յԱստուծոյ զի տացէ §§§-իս մերոյ զիստարեալ առողջութիւնս ըստ հոգւոց և ըստ մարմնոց զկեանս երկար և խաղաղականս, ի պայծառազրդութիւն որոյ Աթոռոյս Եջմիածնի և ի պարձանս խղճալի Աղին մերոյ, և գուք ընկալչիք ի Քրիստոս զառողջութիւն հօգւոց և մարմնոց ձերոց ամէն. Պաշտամիմ և մի զինեւ զանց առնիցէք, այլ յիշեցէք ի Քրիստոս զՎ. ունկիանոս սոսկ զտիրս, որ վասն տրտութեանս պահու սրտազութեամբ զրեցի ի յիշատակ ապառնեացցն»:

ե. 263.

«1210 և ի յունվարի Գ-ին. Կատարեցաւ և զուեղի Էստ երկրորդ հատոր Պատմութեանս Աղուանից»:

ե. 283.

«Ոք վասն մեր՝ զթողութիւնս բանիւք Հայցն նորա զնոյնս ի Քրիստոս արգեամբք առցեն»:

ե. 319.

«Ո բարի ընթերցողք յիշեցէք ի Քրիստոս զՅակոր երջանիկ կաթուղիկոսն ամենայն Հայոց, զատացողն զրբյոց. նաև զմեղասոր և անարժան զըրիչս ի ԱՄՓ թուին և Յունվարի Ժ-ին. Պ. Պ.»:

ե. 328.

«Յաւարա զրբյոց երկրազցուք միոյ մեծին Աստուծոյ: Եւ գոհացուք ըզ դըմութեանց նոյն կարողին միայնոյ:

ե. 329.

«Զներբոյ զրեցեալսդ՝ ի Ակրակս վարդապետի Պատմութենէն առեալ եղաք աստ» Հայոց Ը. Զ. = 1137 թուականին Աղուանից Դագիկ որ և անուանեցաւ. Դրիգորիս, Տէր Ստեփանոս, Տէր Ցովչանէս և Տէր Ներսէս կաթուղիկոսների մասն վերջինս Ա29=1235 թուականին ձեռնազրեալ:

Երես 330.

«Փառատրութիւն Աստուծոյ և վերջաբանութիւն Պատմութեան Աղուանից աշխարհին Զոր Ըարագեալ է քաջ գիտական և գերիմաստ վարդապետն Մովսէս Կաղանկատեցի, Զոր Հրամանաւ Տեառն իմոյ Յակոբոյ մեծի վեհին, ևս Պուռնկիանոս մեղապի և պարսւակոծ Դագիրս ի խրթնացեալ և յերկաթագիր օրինակէ պարզեալ գծազրեցի: ի ԱՄՓ. թուին. Յիշատակարանը՝ Փառք և Պատիւ. Ամենայնի Արարջն Աստուծոյ Հօր՝ որ տայ անիմայօրէն զինդրելիս բարեինդիր խնդրազաց: Օրհնութիւն և գովութիւն Ամենափրկչին Աստուծոյ Միածնի

որդւոյ, որ շնորհէ առատապէս զհայցելիս արժանահայց հայցողաց: Գոհութիւն և խստովանութիւն Համախնամ հոգւոյն Առաւեծոյ, որ բանայ զգուռան ողորմութեան իւրոյ, և բաշխէ լիալրարար զժտելիս պատկանաժտօղ և աներկրայ բաղխողաց: Պաշտօն և երկրագութիւն վերոյիշեալ սրբոց անձանցն համատեղծողաց Երից Համագոյի և Եղարունի Բատուածութեան միոյ, որ առնէ զիամն երկիւղածաց իւրոց, և կատարէ զինզրուածն նոցաւ Յրակու և այժմ ետ զինզրելին, շնորհեաց զհայցելին և բաշխեաց զժտելին, հաւատով ինդրողի սիրով Հայցողի և աներկրայութեամբ բաղխողի Հոգեցնից Ցեառն Յակորայ Սրբազնի Հայրագետին (ամենայն Հայոց և սրբոյ Էջմիածնի մեծի և Քրիստոսափջի Աթոռոյս) և Հասոյց զնա մափականաց սրտին իւրոյ, Արար զկամըս և կատարեաց զտենչումն նորաւ և մանաւանդ՝ արդիւնացոյց զիւր Աստուածեան անսուր պատուեր: Թէ որ ինդրէ առնոււ, որ Հայցէ գտանէ և որ բաղիւ բացցի նմա: Վասն զի ի բազմաց ժամանակաց հետէ ցանկայր և մափակէր՝ սակս առաւելագունի զրափրութեանն իւրոյ, զի ստացի զայս պատմուածութիւն Աղուանատանեայց (զոր արարեալ և Մոխէս վարդապետն գիտնակուն և կաղանկատացի) և ոչ կարէր ստանալ, զի վասն սակաւութեան զրբքոյս այսորիկ, ոչ գտանիւր յամենայն ուրեք, բայց և զի միշտ որոնէր և հետեւէր առ ի գտանել և ստանալ զայս զիւր բոզմօք կարօտանօք, վասնորոյ եղիտ զօրինակ մի ի վանդումն Յօհաննու, որ կայ մերձ Կարի գեղջ, որ զրեցեալ էր ի բազմաց ամաց երկամագրով գժուարակարգալեաւ, և սիսալզրողի զրչաւ, և մեծազրի ձևով, Յայսմանէ օրինակէ իրթնացելց՝ Հրամայեաց բնձ տկարամտի և անզիտի գրըշիս Դուռնիսին Դպրի՝ ըստ Հոգւոյ իւրումն որդեկի նախատապատկանի, դրել զայս գիրք պիտանի և ցանկալի, ի յիշատակ բարի անձին իւրոյ, և ի վայրելումն համօրէն մանկանց սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Եւ զի այսպէս մասոյ խրթին և մըթին էր օրինակն զրբոյս, վասնորոյ ևս անգէտաս, ոչ կարէի թարց նպաստի պարզագրել, և ի լոյս ածել: Ուստի բարիւմտ և դրասէր Հաւու իմ զտեղի իմն սահմանեաց մերձակայ բնդեան, վասն երկուց պատճառաց, նախ զի մնքն ևս օժանդակ լիցի տկարութեամս իմյ, երկրորդ՝ զի փութով աւարտիցեմ զսաւ Յորումն ստահալ զրեի, նորինն օժանդակութեամբ և մշտավահասութեամբ մինչև յաւարուաւմն սորին: Եւ էր թուականս մեր ԱՄՖ. յըսկրան ամոցն Յարի, յոր և զրեալ բազմաւ անձնական մեր և նկական անձնին իւրում արժանացուցէ, որ և բարեխօսութեամբ սորը Աստուածածնին և համօրէն սրբուցն իւրոց զձերն շնորհէսցէ ձեզ, և արքայութեան իւրում ժառանցորդս արասցէ հանգերձ ննչեցելովք ձերավք Ամէն: Հայր մեր, և լու Յիշատակարանիս վերջը վերցիշեալ կարմրագիր ինիք գրած: Ա, զիրքս սուրբ Էջմիածնի է: Մոսկվայում Ա. Էմինի Հրատարակած

ֆումն զրաւեցի յաջողութեամբն Աստուծոյ, Երդ զուա ևտ գրել Հեղահոդի և խոնարհամիտ Զատիկենցաղ և բարեվար, Յոդնահանձար և գերիմաստ՝ սրբազան և Երժանապատիւ Հայրապետս մեր տէր Յակոր ի վայելումն անձին իւրոյ ի կեանս իւրումն և յետ առ Քրիստոս վերափոխելոյն ի կենաց աստի սրբանցելոյ Հոգւոյն իւրոյ յիշատակ բարի: Կաև Հոգւոր և մարմնաւոր ծնողաց իւրոց, և այլոց ամենից արիւակից մերձաւորաց իւրոց, առ մանկունս ուսումնասէրս սրբոյ և միաձնափջի և լուսակերտի Աթոռում մնացի անկողոպատելի և անարտահանելի վասն անուան իւրոյ յիշատակ բարի: Պասնորոյ Հայցեմ ի ձենջ ո՛վ ուսումնասէր Հարքիմ, և եղարքը վերապատուելիք, զի յորժում Հանդիպիցիք սմա, և կամ ընթեռնուցուք, և կամ օրինակ արարեալ նորապէս զայլս գրիցուցանիցէք, յայն ժամ յօժար կամօք և բարի մորք ինդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ զի յայնմաւուր աշեղին յորում գատեսցէ զազդ մարդկան զրբազան և զեռամեծար զբազմաշխատ և ըզյոլով վշտակիր Հայրապետն մեր՝ զտէր Յակոր՝ իւրում քաղցր տեսոյն յաջակողման գասուն, Երանական ձայնին, յարապյութեան Հրամիրման, բարեացն անեղական անանցն հանդստեան: վասացն անփախան կենացն, յաւիտեան՝ արժանացուցէ: բնդ սուրբը և ընդ սիրելին իւր բնակեցուցէ: Ամէն:

Եւ ևս ինդրեմ ի ձենջ՝ յիշել ի Քրիստոս զթարմատար և զրայմամենց՝ զդանապատկան և ըզյուաժապարտ և պարսաւապատէն ծառայա նորին և ձեր ամեննեցուն զԴպիրս Դուռնիսինոս զտաժանմամբ գծողս սորա և մանաւանդ զհադկօզս սորին զէրեմիաս սարկաւազս զհարազատ պաշտմեայս օյն մեծի Հայրապետիս, նա և զկրինակի ծնողսն մեր ընդ որս զհոգկոր և զմարմնաւոր երախտունական մեր զՀարոս զեղրարս և զընկերս: Աւստի, յերես անկեալ յոդնաթափիծ պաղատանօք աղաչեմք ըզհանդիպուզտ զօգտեցուզտ, զվայելօղստ և զշահեցուզտ իսմանէ, յիշել ի յարժանաւոր և ի սուրբ աղօթսդ ձեր, և ինդրել զթողութիւն և զներումն վասն յանցանաց յիշելեացս յԱմէնողորմ և ի բազմագութ յԱրարէն մերմէ, զի թերևս ըստ մերց և ըստ անօրէնսթեանց մերոց ոչ հատուցանելով թողցէ մեղ զյանցանս մեր և նկական ձայնին իւրում արժանացուցէ, որ և բարեխօսութեամբ սորը Աստուածածնին և համօրէն սրբուցն իւրոց զձերն շնորհէսցէ ձեզ, և արքայութեան իւրում ժառանցորդս արասցէ հանգերձ ննչեցելովք ձերավք Ամէն: Հայր մեր, և լու Յիշատակարանիս վերջը վերցիշեալ կարմրագիր ինիք գրած: Ա, զիրքս սուրբ Էջմիածնի է: Մոսկվայում Ա. Էմինի Հրատարակած

օրինակը համաձայն է Պունկիանոսի օրինակի հետ։ Խչպիսի ուղղագրութեամբ սա արտագրել է, նա էլ հրատարակել է։

Հ 250

Առուն՝ Պատմովիճն Ազուանից: Նիհթ՝ Թղթեայ: ԿԱԶՄ Թղթեայ (տպագրած եւ ծովագիր զբքեթ Թղթեր քրարից կացրած եւ սուուրաթզթի հասութեամբ կազմ շնած): ԱԽՆԱՄԱՆՆՔ. բաւական լաւ պահուած: ԱԽԹԵՐԻ: ԴԱՅԱՐԿ 44 երեսի մեծ մասը, 45 երեսի մեծ մասը, 17 և երեսը ամբողջ 175, 176 երեսների կէսը:

ՄԵԺՈՒԹԻՒՆ. 53 × 24 սմ: Թղթեայ: 98: ԳՐԱ-ԹՈՒՆՔ: Միասին 20 × 50 սմ: Գիր: Նուրագիր խառն ուղղագիր: ՏՈՂՔ 40–56: ՎԵՐՆԱԴԻԻՐ. Աղոթքագիր սեւ Թա-Նարով: Ակադեմիատոք՝ Երկաթագրի ծեռվ գրեր: ՍՏԱՑՈՂ ԵՒ ԴՐԻՑ ՅՈՒԺԱՆՆԷԿ արեայ ԳՀՈՐՃԵԱՆ ՇԱԽԱԹՈՒՆՆԱՆ ՇԱԽԻԱԳՐԻ: ՏԵՂԻ. Ս. ՆԵՄԻԱԾԻՆ: ԺԱՄԱՆԱԿ 1829:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ և ԱԽԱՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ:

Կազմի տակի թղթի առաջին երեսի վրայ առև-սերէն դրած է՝

«Իсторія происхождения Агвановъ (жителей русскихъ Мусульманскихъ Провинций.)» Моисея Кагандава-ци. Списанная съ древней рукописи, хранящейся въ Эчмиадзинской Библиотекѣ, Армянскомъ Архимандритомъ описсомъ Шахатунювымъ»

ԵՐԵՍ 1.

Պատմութիւն Ազուանից արարեալ Մովսիսի Կաղանկատուացւոյ ի նոյն աղդէ և յաշխարհէ. սկիզբն առնէ ի ԾՈՆԴԵՋՆ Յարեթի և հասուցանէ ցխախան իններորդ գարուն շարակարգելով զպատ-մութիւն հայրէնի աշխարհին, իշխանութեանն, քը-րիստոնէական լուսաւորութեանն, և յաջորդութեան հոգեոր իշխանութեամբ, և զայլ պարագայս վերա-բերեալս աղդի և աշխարհի իւրոյ։

Եյս մատեսան բովանդակեալ յերիս հատորս գտանէր ի դրանոցի մեծի Աթոռոյս Կաթուղիկէ Էջմիածնի հնագոյն գրչութեամբ եղելոյ ի վաղ ժա-մանակս ի մենաստանին Յովհաննա վանաց՝ որ մերձ ի Կարրի ի վերայ Քասաղ գետոյ յարեմուց նորա ի ժամանակի անդ առաջնորդութեան այնր վանաց Համազասպայ. որ ուներ յիշատակարան ի սկիզբն պատմութիւն յայս օրինակ։ Եյս պատմութիւնն իմաստափական ոչ գոլով ի սուրբ մենաստանիս ի վանս Յովհաննու ես տէր Հեմազասպ բազում փա-փագանաւոք ի ինդիր էի՝ զի յետ իմ մնասցէ ինձ ընծայ ընդ մեծամեծս ի սուրբ այս սիովն կաթու-ղիկէի. Երդ աղաչեմ զծեղ մանկունք սուրբ առա-դաստի հայցել ի Քրիստոսէ զթողութիւն յանցա-նաց մերոց և ինձ եղկելի դրէսի։»

Սոյն վերայիշատակեալդ Համազասպեկաց ա-ռաջնորդ սոյն վանաց յամի Տեառն 1279, և էր ի

Տոհմէ Մամիկոնեանց այր ահարկու և փառացի ըստ ուսուցանելոյ արձանագրութեան այսր վանաց՝ որ ի Զաքարիա սարկաւագէ միարանէ նոյն վանացն Յովհաննու։

Երդ նոյն առսջի գաղափարի պատմութեանց գոլով կարի մեծագիր և գժուարընթերց օրինակեցի ես ինքնին զայն ի սոյն յայս ի պարապումն ինձ ի հարկաւոր դէպու և յաւելի ևս ի վախճանին ըզ-ցանկ մտացն բավանդակ ըստ այրութենական կարգի։ Յամի Տեառն 1829, ի սուրբ Էջմիածնի. — Յովհան-նէս արեղայ Գէորգեան Շահնամեռնեանց Շահրի-արցի։

Եյս օրինակը միանգամայն համաձայն է Փա-րիզի հրատարակութեան հետ. այնպէս որ թերևս Կ. Վ. Շահնազարեանցը այս օրինակից լինի ընդօ-րինակած։ Եեռագրի վերջում կայ յատուկ անուանց ցանկ։

Խչպէս նկատեցինք Մովսիսի Կաղանկատուաց-ւոյ Եղուանից Պատմութեան երկու տպագրութիւններն էլ առաջին խմբի պատկանող ձեռագրերից են եղել։ Ենապէս որ 1289 թուականի Մայր օրինակից որքան յայտնի է առաջին անգամ ընդօրինակել է Պունկիանոս Պափիրը Յակոր Շամանեցի կաթուղի-կոսի հրամանով 1761 թուին, իսկ նրանից յետոյ Հայր Շահնամեռ 1829 թուականին։ Սորա երկուսն էլ առանձին առանձին ընդօրինակել են 1289 թուականի ամենաշին օրինակից։

Տպագրութիւններից Պարիզեանը հրատարակ-ուած է երջանկայիշատակ Կ. Վ. Շահնազարեանցի աշխատափարութեամբ։ Որ է այսպէս՝ Թ. 1 և Շար Հայ պատմագրաց։ Մովսէս Կաղանկայտուացի Պատ-միչ Աղվանից։ Հատոր Ա. 1860 Փարիզ Ռ. Յ. Թ. 2 և Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսի-սի Կաղանկայտուացւոյ ի լոյս ընծայեաց * հանդերձ ծանօթութեամբք. Կ. Վ. Շահնազարեան՝ միարան սրբայ Էջմիածնի և անդամ Խորհրդարանի Լաղար-եանց ձեմարանին որ ի Մովսիվայ։ Ի գործատան Կ. Վ. Շահնազարեան Հարուստ ծանօթութեամբ 1—86 երես։ Պանօթութեան 85 երեսում՝ «Տպագր-րութիւն մատենիս եղաւ չորից օրինակաց համեմա-

* Զաքարիայ սարկաւագի պատմագրութիւն 1870 ի Վաղարշապատ. Տատոր III երես 50. Ժ. Թուին ԶԻՒ-1279. Եղեւ Հայր Համազասպ։ Եյս Համազասպ բազում արդինս արարի եւ բազմացոյ զգեստան աստուածային, որ եւ բա-զումք կան զետ եւս։ Սա էր յաւուր որդուց իշխանին Քրոյ, եւ վարէր զառաշնորդութեան մարմաւոր իշխանու-թեամբ։ Եւ էր նոքն յազգէ Մատիկնէրց, այս փառանդ եւ անարկու տեսողացն։ Զայս ուսաց ի բազում զրոց լի-շատակարանաց եւ յարձանաց ի բազում տեղիս։ Ժան-յուլուածագրի. Թ. Ցամներորդ առաջնորդ վանացն Յովհան-նու։

տութեամբ յորոց կառաջինն ըազում զգուշութեամբ դաղափարեալ էի ես ինձէն ի սուրբ Էջմիածին ի մոի ունելով միշտ զտպագրութիւն այնորիկ ի պատեհ ժամու Զերկրորդն նոյնակա օրինակեալ ի սուրբ Էջմիածին ընծարեաց ինձ ազգասիրաբար Մեծապատիւ գիտնական Մկրտիչ աղայն Մուշեան, բարեկամն իմ զերրորդն զրեալ ի Դավթէ յայլ իմն ձեռագրոյ ետ ինձ համեմատութեան աղապաւ արդյո բարեկամն իմ Գրիգոր Էջենտին Մարիուսան, և զշորորդն գաղափարեալ ի Կոստանդնուպոլիս, ետ ինձ պատուարժան Գալուստ աղայն տէր Պօղոսեան, Որոց ամենեցուն յիշատակն օրչնութեամբ և գովութեամբ եղիցի ի ժողով գրասիրաց, Զարտառուջ ողբն Դաւթակաց քերթողի արարեալ ի մաշն Զիւանշիրի պակասեալ ըստ կիսոյն յերկրորդ և ի չորրորդ օրինակս մեր, անթերի ունեին առաջին և երրորդ օրինակքն, Արդ յետ մանրակրիտ համեմատութեան օրինակաց մերոց, եւ կարգելոյ յառաջարան և ծանօթութիւն կարելոր ի բացատրութիւն և յուղղութիւն վրիսակաց ընծայեմ ահա ի լոյս զհաշակաւոր և հաղուագիւտ մատեանս զայս ի 1200 ամաց հետէ, թողեալ ի խուարի, ի փառս ամէնօրհնեալ սրբյ կուսին և յօդուտ ուսումնասէր հայ մանկը տուցն ոչ այլ ինչ խնդրելով ճգանցս փոխարէն, բայց եթէ զման աղօթից արժանաւորաց ի կազդյոր վրշտակիր անձնին, զի որպէս սկսայ նոյնակս և կատարեցից զծեռնարկն իմ 1 Յունվարի 1860. Պարիս, Ա. Վ. Շահնազարեանց »:

Խնդպէս ընթերցողը կտեսնէ Հանդուցեալ Շահնազարեանը ունեցել է չորս օրինակ աղուանից պատմութեան, երկուսը Էջմիածնում ընդօրինակուած (արդեօք 1289, 1761 թէ 1829 թուականների՝ ձեռագրերից) երկուսից մինը Դավթէ ժում, միւր Պօլսում ընդօրինակուած և ոչ մինի էլ ընդօրինակութեանց թուականը յայտնի չէ, Արդեօք դիմանիր մէն մոռացմամբ օրինակների թուականները զանցառութեան է տուած, թէ այսպէս և թէ այնպէս՝ այսպանը միայն պարզօրէն յայտնի է, որ Շահնազարեան հրատարակութեան բոլոր օրինակները առաջին խմբի օրինակներ են. Այն զանազանութեամբ միայն որ Դաւթակ քերթողի ողբը ի մաշն Զիւանշիրի քաջ իշխանի, երկու օրինակում ամբողջ և անթերի պահուած են եղել. քանի որ Հիմնական օրինակներում կիսառ են, Խոկ թէ ողբի կէս մասը հարազատ է՝ թէ ոչ, այս մասին ուրիշ անգամ:

Փարիզեան տպագրութիւնը հատորեալ է: Պատմութեան 1 և 2 հատորները մի գրքի մէջ, իսկ 3 և Թովմա Մեծորեցոյ պատմութիւնը միւս հատորի մէջ, Փարագիր ծաւալով 18 × 12 սմ: իւրագանչիւր երես 25 տողից 8 սմ: երկարութեամբ 1 հատորը 432

երեսից բաղկացած ծանօթութեանց հետ ի միասին իսկ 2-ը 118 երեսից թումա Մեծորեցին էլ 134 երեսից:

Մուկվայի տպագրութիւնը՝ թ. 1^{ու} «Պատմութիւն Աղուանից Աշխարհի»: թ. 2^{ու} «Մուկվայի կատառացուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի ի լոյս ընծայեաց Մկրտիչ Ամին. ծախիւք ներբին Խորհրդականի սենեկապետի եւ ասպետի Խաչառորյ Յովակիմեան Լազարեվի: Մուկվա. ի տպարանի Լազարեան Ճեմարանի արևելեան Եղուաց 1860»:

թ. 3^{ու}

«Ի յիշատակ հանդուցեալ Հոգարարձու Լազարեան Ճեմարանի արևելեան լեզուաց ներգործական Պետական Խորհրդականի սենեկապետի եւ ասպետի Յովշաննու Յովակիմեան Լազարեվի: թ. 4^{ու}

«Ազգ. յերկուց անթուական օրինակաց արարաք դյառաջիկայ տպագիրս՝ մեծաւ զգուշութեամբ բաղդատեալ և մաքրեալ զայնս ի գրչացն վրիպակաց, եւ որովհետեւ զառաջինն ելանէ ի լոյս «Պատմութիւն Աղուանից աշխարհի» ի Մուկվայի կաղանկատուացւոյ արարեալ, սմին իրի քաջայոյս եմք, զի որ յուսումն Պատմութեան զեգերեն՝ Հաշտացը հայել ունին յայս մեր նուեր ի սեղան հայ մատենագրութեան: Ի բազմագարեան աւերակաց այսպէս ահա ամրարձեալ զիւր զլուիր՝ արձանանայ տռաջի մեր ազգ մի ողջոյն այսինքն է Աղուանիցն, զորյ զտարեգիր մինչ ցայսօր ժամանակի ի հատուկոր յիշատակութիւնս մերոց մատենագրաց սովորեար նշարել և եթ. Պ. Էմին. Ի ճեմարանն Լազարեանց, 10-ն Մարտի 1860 ամի»:

Մուկվայի տպագրութիւնը երեք հատորը մի գրքի մէջ 286 երեսից բաղկացած: 23 × 15 սմ: մեծութեամբ իւրաքանչիւր երես 31 տողից 10 սմ: երկարութեամբ:

Թէկ հանդուցեալ Էմինը «յերկուց անթուական օրինակաց» է զրում իւր հրատարակութեան աղջում: բայց համեմատութիւնից յայտնի է որ երկու օրինակն էլ համաձայն են Էջմիածնայ օրինակի հետ և պատկանում են նոյն խմբին:

Ենսպէս ուրեմն Էջմիածնայ երեք օրինակները, Փարիզեան հրատարակութեան չորս օրինակները և Մուկվայի երկու օրինակները պատկանում են մի խմբի—այն է միանգամայն նման են Էջմիածնայ հիմնական 1289 թուականի օրինակին, Արովհետեւ Էջմիածնայ հիմնական օրինակը մի քանի տեղերում քերուածքներ և եղծուածքներ ունի, և քանի որ յիշեալ եղծուածքները կրինել են վերոյիշեալ բոլոր օրինակների ընդօրինակողները որոնցից էլ տպագրուած հրատարակութիւնները, ուստի պարզ է որ

բոլորի համար էլ հիմք է ծառայել Էջմիածնայ (Հուռմն Յովհաննու վանաց) հին օրինակն:

—Մովսիսի Կաղանիշայտուացւոյ Ըղուանից պատմութեան օտարալեզու թարգմանութեանց մասին ուրիշ անդամ:

ԱՌ ՀԵՐԵՎԱՆԻ ԱՅԼ.

ԽԱՀ/Կ Վ.




ՆԱԽԱԿԻ ԽՄԵԱԳՐՈՒԵԱՆ.

Բազմարդին Խմբագրութեան Ծրարաս Ամսագրոյ.

Իրբե մի նոր դիւտ, մի նոր զարդ յանձնելով խմբագրութեանց այս և օթն տող ըեւեաձեւ արձանագրութեան օրինակը՝ յայտնում եմ, թէ 1862 թուից ցայսօր առաջին անդամն եմ պատահում աղիւսի վերայ զրառւածի մի արձանագրութեան: Այս արձանագրութիւնը գտնու էլ է Արմանիրում աշխատութեամբ Արմ. Յովհաննէս քահանայի Տ. Յակովբեան Մօլլարյազիացու այս 1895 թուին բայց ափսոն որ՝ կիսով չափ կոտրուած է աղիւսի ուստի և գրուածը չէ կարդացում: որոյ համար մոտավիր եմ Աստուծով առաջիկայ ամսին գնա: Արմանիրս որոնել գտնել աղիւսի կէս մասը և գուցէ որիշ արդպիսիք եւ:

Արձանագրի առաջին տողն համարեամ միւս շատ արձանագրութեանց առաջին տողին նման է, միայն առաջին բառի մի դիմք պակաս է, զօրութինակի, արձանագրերի մեծ մասը սկսում է



Ակս աղիւսի երկայնութիւնն է 5½ վի րշոկ և լայնութիւնն 4 վերշոկ: իսկ թանձրութիւնն մի վերշոկ:

Արձանագրիս բերելու համար յատկապէս ուղարկեցի ուսուցիչ պ. Շ մաւօն Շ աշապունուն որպէս զի անվնաս բերե աղիւսը և միւս կէս մասի գտնելու համար Արմաւրայ քահանայից հետ խօսէ, որք մօտ լինելով բըրին հնար ունին միշտ որոնել տալու: Հարհանգութեանս համաձայն վարուելով պ. Շ աշապունին աղիւսը բերեց, որ այժմ զրանեղանի վերայ, զրած սպասում եմ կէս կորուսեալ մասին, որ ամբողջայրած ընծայեմ: Ա. Էջմիածնի թանգարանին:

ՄԵՍՄԻՋԱ ԱՐ-ՔԵՐՊԱԿՈՊՈՅ.

50-Ն ՅՈՎՀԱԿԻ
1895 ամի.

Խ. Ա. ՀԵՐԵՎԱՆԻ

ԱՐՄԵՆԻԻ ԺԱ. ԱՐՁԱՆԱԳՐԻ ԱՂԻՒՍԻ ՎԵՐԱՅ, 1895: № 21

1					
2					
3					
4					
5					
6					
7					